ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև 1996 թ. սեպտեմբերի 27-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի և ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման ու գործառման համար հողամասերի հանձնման ու օգտագործման կարգի մասին համաձայնագրում փոփոխություն կատարելու մասին արձանագրության կնքման նպատակահարմարության վերաբերյալ

Վերոնշյալ Արձանագրության նախագիծը կազմվել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված ռուսաստանյան ռազմակայանի առկա տեղաբաշխման կետերը սահմանված են 1996թ. սեպտեմբերի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանյան Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի և ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման ու գործառման համար հողամասերի հանձնման ու օգտագործման կարգի մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) հավելված ցանկի համաձայն: Ցանկում տեղաբաշխման կետերը նշված են որպես ռազմական ավաններ:

Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից Համաձայնագրով սահմանված ռազմակայանի տեղաբաշխման կետերի ցանկում, ռազմակայանի խնդիրների փոփոխությամբ պայմանավորված, մի քանի անգամ փոփոխվել է նաև ռազմակայանի տեղակայման կետերը, որի հետևանքով Համաձայնագրում համապատասխան փոփոխություններ և լրացումներ են կատարվել (2000թ. սեպտեմբերի 27-ին, 2003թ. նոյեմբերի 11-ին, 2005թ. նոյեմբերի 30-ին և 2007թ. սեպտեմբերի 25-ին ստորագրված արձանագրություններով): Ռուսաստանյան 102-րդ ռազմակայանի զինվորական ստորաբաժանումները Երևանից Գյումրի տեղափոխման հետ կապված անհրաժեշտություն է առաջացել վերը նշված հիմքով

ՀՀ պաշտպանության նախարարությունը հաշվի առնելով ՀՀ տարածքում տեղակայված ռուսաստանյան ռազմակայանի կառուցվածքային և տեղակայման հետ կապված փոփոխությունները, հանդես է եկել Համաձայնագրում փոփոխություններ կատարելու նախաձեռնությամբ:

Դիտարկվող Արձանագրությամբ փոփոխություն է կատարվում Համաձայնագրում, որի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված ռուսաստանյան ռազմակայանի կետերի սահմանված կարգով տեղաբաշխման ցանկից հանվում և հայկական կողմին է վերադարձվում.

N41 զինավանը, Երևան, Օրբելի 29 հասցեում տեղակայված 372-րդ զինվորական հոսպիտալ,

N54 զինավանը, Երևան, Զ.Սարկավագի 54 հասցեում տեղակայված 123-րդ ՄՀԳ-ի «Քանաքեռ» զինավան,

N67 զինավանը, Երևան, Զ.Սարկավագի 50 հասցեում տեղակայված նախկին N 16 պոլիկլինիկայի շենք,

N4 զինավանը, Երևան, Վերին Նուբարաշենում տեղակայված հրաձգարան,

N3 զինավանը, Երևան, Վերին Նուբարաշենում տեղակայված ուսումնական կենտրոն:

Արձանագրությամբ կատարվող փոփոխությունների նպատակն է հստակեցնել և փաստացի վիճակին համապատասխանեցնել ՀՀ տարածքում տեղակայված ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի ցանկը, ինչպես նաև իրավական հիմք ստեղծել նշված ռազմական ավանները Համաձայնագրով սահմանված կարգով հայկական կողմին վերադարձնելու համար:

Արձանագրությունը բխում է Համաձայնագրից և կազմում է նրա անբաժանելի մասը:

Հաշվի առնելով վերոնշյալը ՀՀ պաշտպանության նախարարությունը նպատակահարմար է համարում սկսել Արձանագրության կնքման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերը:

ՀՀ պաշտպանության նախարար

Ս.ՕՀԱՆՅԱՆ